

**ՀՀ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ
ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Սերգեյ ԷԼԱՐՅԱՆ

ՀՊՏՀ Միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոնի ասպիրանտ

Բանալի բառեր. ՏՏ ոլորտ, օտարերկրյա և տեղական ընկերություններ, որակավորված մասնագետներ, ներդրումներ

Տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների (ՏՏ) ոլորտը Հայաստանի տնտեսության ամենաարագ զարգացող ճյուղերից մեկն է: Այն առաջատար դիրք է գրավում տեխնոլոգիական նորարարությունների, օտարերկրյա ներդրումների և աշխատուժի կատարելագործման բնագավառներում:

2000 թվականից ի վեր ՏՏ ոլորտը ՀՀ Կառավարության կողմից ճանաչվել է որպես երկրի տնտեսական բարգավաճման կարևորագույն բաղադրիչներից մեկը: 2008 թվականին Կառավարության կողմից ընդունված ՏՏ ոլորտի բազմակողմանի ռազմավարությունն ուղղված է զարգացնելու հեռահաղորդակցության և բիզնես ինկուբացիայի ենթակառուցվածքը, բարձրացնելու տեխնիկական կրթությամբ շրջանավարտների թիվը և որակավորումը, ընդլայնելու տեխնոլոգիական ոլորտի սկսնակ ընկերությունների աջակցման և ֆինանսավորման մեխանիզմները և խթանելու հայկական ՏՏ ոլորտի այլ կարևոր բնագավառների աճը:

Ոլորտի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՏՏ ոլորտից մեր ակնկալիքները կարող են արդարանալ զարգացման հետևողական, նպատակային քաղաքականություն վարելու դեպքում, երբ ոլորտի հիմնախնդիրները, ելնելով տարածաշրջանային և համաշխարհային զարգացումների թելադրանքից, արագ լուծումներ կստանան, երբ ապահովվի խոշոր արտասահմանյան ընկերությունների մուտքը և նոր ներդրումների հոսքը Հայաստան: Իհարկե, օրենսդրական կարգավորումը միայն բավարար չէ մրցունակ լինելու համար. ՏՏ կլաստերը պետք է ունենա առավել համախմբվելու, արտաքին աշխարհում համակարգված քայլերով շուկաներ գրավելու և ընդհանուր ոլորտային խնդիրները համատեղ լուծելու կարողություն:

Պատմականորեն Հայաստանը զբաղեցրել է առաջատար դիրք բարձր տեխնոլոգիաների հետազոտության, մշակումների և արտադրության ոլորտում: 1950-ականների սկզբից Խորհրդային Հայաստանը եղել է ԽՍՀՄ գի-

տական գիտահետազոտական գործունեության հիմնական կենտրոնը տեխնոլոգիական ոլորտի մի շարք կարևորագույն սեգմենտներում՝ հզոր էՅՄ-ներ, արդյունաբերական հաշվարկում, էլեկտրոնիկա, կիսահաղորդիչներ, ծրագրային ապահովման մշակում և այլն: Մինչ Խորհրդային Միության փլուզումը Հայաստանի տեխնոլոգիական ոլորտը հիմնականում կատարում էր խոշորածավալ գիտահետազոտական և արտադրական պատվերներ՝ ուղղված արդյունաբերության և պաշտպանության ոլորտների ապահովմանը: 1991թ. անկախությունից հետո ոլորտի ուղղվածությունը փոխվեց դեպի ծրագրային ապահովման մշակում, պատվերների ներգրավում (աուտսորսինգ) և ՏՏ ծառայություններ: 2010թ. Հայաստանի ՀՆԱ-ում ՏՏ ոլորտի մասնաբաժինը կազմել է շուրջ 1.7%¹, ինչը կարող է համեմատվել Հնդկաստանի (1.4%) և Գերմանիայի (1.3%) հետ:

Վերջին տարիներին տեղական ոլորտը արձանագրել է արտասահմանյան ներդրումների խոշոր ներհույք, որոնք մուտք են գործել հայկական շուկա տեղի բարձրակարգ երիտասարդ կադրերի շնորհիվ, որոնք մասնագիտացված են հիմնականում հետևյալ ոլորտներում՝ ներկառուցված ծրագրային ապահովում և կիսահաղորդիչների նախագծում, ծրագրային ապահովման պատվերներ և արտապատվիրում, ֆինանսական ծրագրեր, մուլտիմեդիա նախագծում, ինտերնետային ծրագրավորում, վեբ ծրագրավորում, տեղեկատվական համակարգեր և համակարգերի ներդրում: Միկրոսխեմաների նախագծման ոլորտում մասնագիտացող արտասահմանյան ընկերությունները հիմնում են գիտահետազոտական կենտրոններ Հայաստանում՝ օգտվելով տեղի շնորհալի և ստեղծագործ մասնագետների ու համեմատաբար ցածր աշխատավարձերի առկա առավելություններից:

Օտարերկրյա ներդրողների համար Հայաստանում մի շարք արտոնություններ են առաջարկվում: Մասնավորապես, հիմնադիր կապիտալում ներդրումների կատարման համար տուրքեր չեն գանձվում և որևէ խոչընդոտներ չկան շուկա մուտք գործելու նպատակով կատարվող ներդրումների համար: «Օտարերկրյա ներդրումների մասին» օրենքով ներդրումների պաշտպանության հնգամյա ժամկետ է սահմանվում օրենսդրական անբարենպաստ փոփոխությունների դեպքում: Բացի դրանից, տարեկան հարկային վնասները տեղափոխվում են հաջորդ ֆինանսական տարի: Հարկ է մշել, որ Համաշխարհային բանկի 2013 թվականի «Doing Business» դասակարգման վարկանիշային աղյուսակում «Բիզնես վարելու դյուրինությունը» ցուցանիշով Հայաստանը զբաղեցրել է 32-րդ տեղը (185-ի միջից), իսկ «Բիզնեսի հիմնադրում» ցուցանիշով՝ 11-րդ տեղը: Ըստ նույն աղբյուրի, Հայաստանում առա-

¹ 2009թ. ՀՆԱ ցուցանիշի հիման վրա: Աղբյուրը՝ ՀՀ Կենտրոնական Բանկ

վել դյուրին է դարձել բիզնեսի հիմնադրումը՝ հետզհետե ցուցումային ընթացակարգերի պարզեցման և ընկերությունների հիմնդրման համար վճարների վերացման շնորհիվ: Ստորև բերված աղյուսակում² ներկայացված են բիզնեսի հիմնադրման և վարման հիմնական ցուցանիշները: Ինչպես ցույց է տրված աղյուսաում, ներկայացված ցուցանիշները Հայաստանում ավելի նպաստավոր են, քան Եվրոպայում, Կենտրոնական Ասիայում և ՏՀԶԿ երկրներում:

Աղյուսակ 1. Բիզնեսի հիմնադրման և վարման հիմնական ցուցանիշները

Ցուցանիշ	Հայաստան (2014)	Եվրոպա և Կենտ. Ասիա	ՏՀԶԿ երկրներ
Բիզնեսի հիմնադրման և հաշվառման համար պահանջվող ժամկետ (օրեր)	3	12.1	9.2
Բիզնեսի հիմնադրման համար պահանջվող ծախսերը (մեկ շնչին ընկնող եկամտի %)	1	5.3	3.4
Պայմանագրերի կատարման ապահովում. ժամանակ (օրերով)	570	448.1	539.5
Պայմանագրերի կատարման ապահովում. ծախսեր (պահանջի %)	14	25.2	21.4
Ընդհ. հարկային դրույքաչափ (եկամտի %)	20.4	34.9	41.3

Իրականացված բարեփոխումների շարքում առանձնակի ուշադրության է արժանի նաև 2011 թվականի մարտի 25-ին բացված իրվաբանական անձանց պետական ռեգիստրը, որը գործում է «մեկ պատուհանի» սկզբունքով: Արդյունքում պարզեցվել են գրանցման գործընթացները և բիզնեսի գրանցման համար անհրաժեշտ ժամանակը կրճատվել է գրեթե երկու շաբաթով: Ներդրված նոր համակարգի պայմաններում կրճատվել են նաև բիզնեսի հիմնադրման համար անհրաժեշտ ծախսերը³:

Հայաստանում տեխնիկական աշխատուժը ՏՏ խոշոր ընկերությունների և վերազգային կազմակերպությունների համար ստեղծում է շահավետ ներդրումային պայմաններ. հաշվարկվել է, որ այս մրցունակ մասնագետները միջինում ապահովում են իրենց ընկերությունների համար 37.000 ԱՄՆ դոլար տարեկան արտադրողականություն⁴:

Հայաստանում այսօր գործում են շուրջ 360 ՏՏ ընկերություններ, որոնք միջինում ապահովում են տարեկան 23% աճ: Այս ընկերությունների 90%-ը

² Աղբյուրը՝ <http://www.doingbusiness.org>

³ Աղբյուրը՝ <http://www.ifc.org>

⁴ ՀՀ տեղեկատվական և հեռահաղորդակցության ոլորտի հաշվետվություն 2012թ.

տեղակայված են Երևանում, այնուամենայնիվ, ՀՀ այլ մարզերում գործող ընկերությունների թիվը տարեցտարի աճում է՝ շնորհիվ մարզային զարգացման ծրագրերի շրջանակներում կրթական և գործարար ենթակառուցվածքների զարգացման:

Ստորև ներկայացնենք Հայաստանում գործող հարկերի հիմնական տեսակները, որոնք համարվում են բավական ցածր՝ համեմատած այլ երկրների հետ՝

- բազմաստիճան/միասնական եկամտային հարկ, որի դրույքաչափերն են՝ 24.4%, 26% և 36%,
- սոցիալական վճար՝ 5%,
- ավելացված արժեքի հարկ՝ 20%,
- շրջանառության հարկ՝ կախված գործունեության իրականացման տեսակից (ծառայությունների ոլորտի համար սահմանված է 5%),
- շահութահարկ՝ 20%:


Գործում են նաև արտոնություններ արտահանողների համար, որոնցից են արտահանման տուրքերի չկիրառման, արտահանող արտադրանքի և ծառայությունների արժեքի մեջ ԱԱՀ-ի վերադարձման համակարգը: Որոշ ՏՏ արտադրանքների ներմուծումը ազատված է մաքսային տուրքերից և հարկերից, իսկ որոշ սարքավորումների ներմուծման դեպքում ԱԱՀ-ի գանձումը հետաձգվում է (հիմնականում մեկ տարի ժամկետով): ՀՀ մաքսային օրենսգրքի համաձայն՝ համակարգչային ծրագրերի բովանդակության արժեքը ներառված չէ մաքսային արժեքի մեջ, որը սահմանափակվում է զուտ կրիչի արժեքով: Այս դրույթը համապատասխանում է մաքսային արժեքի որոշման վերաբերյալ՝ Առևտրի համաշխարհային կազմակերպության համաձայնագրերին և «Սակագների և առևտրի գլխավոր համաձայնագրին»:

2014 թվականին ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից նախաձեռնվեց ՏՏ նորաստեղծ ընկերությունների համար հավելյալ հարկային արտոնություններ սահմանող մեխանիզմների մշակումը, որն ուժի մեջ մտավ և սկսեց գործել 2015 թվականի սկզբից: Նորաստեղծ ընկերությունների համար սահմանվել է պարզեցված ընթացակարգ, և դրա համաձայն, նրանցից պահանջվում է ընդամենը 10% եկամտային հարկ և 0% շահութահարկ վճարել գործունեության առաջին երեք տարիների ընթացքում, պայմանով՝ որ ընկերությունը լինի նոր ստեղծված, չլինի դուստր ընկերություն կամ վերակազմակերպված ընկերություն, և ունենա 30-ից ոչ ավելի աշխատող:

Հայկական ՏՏ ոլորտի ընկերությունները բաժանվում են երկու առանձին սեգմենտների՝ տեղական կապիտալով ընկերություններ և արտա-

սահմանյան ընկերությունների մասնաճյուղեր (նկար 1): Յուրաքանչյուր սեգմենտին պատկանող ձեռնարկությունների հատկանիշները, ինչպես օրինակ՝ աշխատակիցների թիվը, աշխատավարձը, հասույթը և այլ ցուցանիշները, էապես տարբերվում են միմյանցից:

Նկար 1: Տեղական կապիտալով SS ընկերությունների թվի դինամիկան




Հայաստանի ծրագրային ապահովման և ծառայությունների ոլորտը բավական երիտասարդ է՝ շուրջ 80%-ը հիմնադրվել է 2000-2010թթ.: Ծրագրավորման ոլորտի առաջին մասնավոր տեղական ձեռնարկությունը հիմնվել է 1987թ., այնուհետև հինգ տարվա ընթացքում երևանում բացվել է արտասահմանյան ընկերության առաջին մասնաճյուղը:

Երկրի սահմաններից դուրս բարձր ճանաչում է ստանում Հայաստանի ծրագրավորման ոլորտի վարկանիշը՝ խթանելով SS ոլորտում արտասահմանյան ներդրումների ներգրավումը: Համեմատած 2008թ. հետ՝ ռուսաստանյան կամ ԱՊՀ երկրների մասնակցությամբ ընկերությունների թիվը աճել է 50%-ով՝ շնորհիվ վերջին ժամանակաշրջանում հեռահաղորդակցության և աուտսորսինգի ոլորտներում ընկերությունների ձեռքբերման գործարքների: 2004թ., 2005թ. և 2010թ. հայկական SS ոլորտի միկրոսխեմաների նախագծման սեգմենտում տեղի ունեցավ խոշոր գործարք երկու ընկերությունների միջև: Synopsys Inc. ընկերությունը, որը կիսահաղորդիչների նախագծման և արտադրության համար ուժումների մշակման ոլորտի առաջատարն է, ձեռք բերեց LEDA Design, Monterey Arset, HPL technologies և Virage Logic ընկերությունները: Synopsys-ին պատկանող ծրագրավորման նոր համատեղ


Կենտրոնը Հայաստանում այժմ ծրագրավորման ոլորտի ամենախոշոր տեղական ձեռնարկությունն է:

Նկար 2. Օտարերկրյա բաժնեմասնակցությամբ ՏՏ ընկերությունների թվի դինամիկան և ոլորտի շրջանառության աճը



Այժմ ՏՏ ոլորտում ամենատարածված մասնագիտացումներն են ինտերնետային ծառայությունները, պատվերով ծրագրերի մշակումը, վեբ ծրագրավորումը և ՏՏ խորհրդատվությունը: Ընդհանուր առմամբ, հայկական ՏՏ ընկերություններն արտապատվիրման և վեբ դիզայնի ոլորտներից այժմ անցում են կատարում դեպի այլ տիպի արտադրանքի և ծառայությունների ոլորտ: Այս փաստն ակնհայտորեն դրական նշան է, ինչը վկայում է այն մասին, որ ոլորտը ձեռք է բերում առավել բարձր հավելյալ արժեքով ծառայությունների մատուցման ուղղվածություն: Ավելացել է ճարտարագիտության, համակարգերի մշակման և գիտահետազոտական ծառայությունների ոլորտներում մասնագիտացող ընկերությունների թիվը: Այս տեղեկությունը բարենպաստ է եղել հատկապես տեղական ընկերությունների համար, որոնք այժմ ներգրավված են նաև միկրոսխեմաների նախագծման և համակարգերի ճարտարագիտության ոլորտներում: Ակնհայտ է, որ վերջին տարիներին տեղական ընկերությունները ձեռք են բերել անհրաժեշտ որակավորում բարդ ծրագրային լուծումներ և ծառայություններ առաջարկելու համար: Բացի այդ, ՏՏ ընկերությունների գործունեությունը ծավալվում է նաև ինտերնետին առնչվող ոլորտներում, ինչպիսիք են վեբ դիզայն և ծրագրավորում, ինտերնետային ծառայությունների տրամադրում, ինտերնետային ծրագրեր:

Նկար 3. Ընկերությունների մասնագիտացման ուղղություններն՝ ըստ ընդհանուր կազմում նրանց զբաղեցրած տեղի



Այս բնագավառի նկատմամբ հատուկ ուշադրությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով՝ ինտերնետային ծառայությունների հանդեպ համենատարբար բարձր և աճող պահանջարկ, երիտասարդ ձեռնարկատերերի համար այս շուկան թափանցելու աննշան խոչընդոտներ և Հայաստանում էլեկտրոնային առևտրի զարգացման հեռանկարներ: Չնայած, որ վեբ ծրագրավորումն ունի ցածր հավելյալ արժեք, այդուհանդերձ այս բնագավառը կարևոր դեր է ծաղում ընդհանուր ոլորտում, քանի որ վեբ դիզայնի ծառայություններ մատուցող փոքր ընկերությունների թիվը զգալի բարձր է: Ընդհանուր առմամբ, թե՛ տեղական ընկերությունների, թե՛ արտասահմանյան մասնաճյուղերի գործունեությունը հետզհետե կրում է առավել բազմակողմանի բնույթ, քան նախկինում:

Հայաստանի ծրագրային ապահովման և ծառայությունների ոլորտը բավականին երիտասարդ է. ընկերությունների մեծ մասը՝ ավելի քան 80%-ը, հիմնադրվել է 2000-2014թթ.: Ծրագրավորման ոլորտի առաջին մասնավոր տեղական ձեռնարկությունը հիմնվել է 1987թ., այնուհետև հինգ տարվա ընթացքում երևանում բացվել է արտասահմանյան ընկերության առաջին մասնաճյուղը: 1991-1997թթ. տեխնոլոգիական ոլորտն ապրել է բավականին ծանր անցումային շրջան, երբ տարածաշրջանային հակամարտությունները, անկումային տնտեսությունը և բարձրակարգ մասնագետների արտագաղթը

Չայկական ընկերություններն ու մասնագետներն օգտագործում են տարբեր տեխնոլոգիաներ և ունեն ավտոնոմ, կլիենտ/սերվեր, ինչպես նաև ինտերնետին (net-centric) առնչվող ծրագրավորման փորձ: Այն ընկերությունները, որոնք զբաղվում են ներկառուցված համակարգերի նախագծմամբ ու տեստավորմամբ, կիրառում են միայն C/C++ և ասեմբլերի լեզուները: JAVA և .NET տեխնոլոգիաները կիրառում են հիմնականում այն ձեռնարկությունները, որոնց գործունեությունն ուղղված է ինտերնետային լուծումներին: Լայնորեն կիրառվում են նաև այնպիսի ինտերնետային տեխնոլոգիաներ, ինչպիսիք են AJAX, JSP, ASP, PHP, ColdFusion, HTML, DHTML, XML, և Flash: Չայկական ձեռնարկություններն օգտագործում են նաև այլ լեզուներ ու տեխնոլոգիաներ, ինչպես օրինակ՝ Visual Basic, Delphi, Perl, սվյալների շտեմարարների հայտնի համակարգեր՝ Microsoft SQL Server, MySQL, Oracle և Informix: Մշակվում են ծրագրեր Windows, Solaris, Linux և շարժական համակարգերի պլատֆորմների (handheld platforms) համար: Բաց կոդով (Open Source) ծրագրերը նույնպես լայն տարածում են ստացել երիտասարդ մասնագետների, ուսանողների, ինչպես նաև SS ձեռնարկությունների շրջանում:


Մարդկային ռեսուրսներն, անկասկած, Չայաստանի SS ոլորտի մրցակցային ամենակարևոր առավելություններից են: Օտարերկրյա ներդրողների համար գրավիչ է ոչ միայն աշխատուժի ցածր վարձատրությունը, այլ նաև հայ մասնագետների բարձր արտադրողականությունը: 2014թ. SS ոլորտում զբաղվածների թիվը հասել է 11564-ի, ինչի արդյունքում մոտ 10% աճ է արձանագրվում 2013թ.-ի համեմատ: Տեխնիկական մասնագետների թիվը հասել է 9567-ի, որոնց շարքում են ծրագրային ապահովման ճարտարագետները, վերլուծաբանները, ծրագրավորողները, SS ծրագրերի ղեկավարները:

Տեխնիկական աշխատուժի արտադրողականությունը օտարերկրյա բաժնեմասնակցությամբ ընկերություններում աճել է 5%-ով՝ համեմատած 2013թ.-ի հետ, հասնելով մեկ աշխատողի հաշվով 45923 ԱՄՆ դոլարի, իսկ տեղական ընկերություններում աշխատողների արտադրողականության հարցում առանձնապես խոշոր տեղաշարժեր չեն արձանագրվել և այն կազմում է 30500 ԱՄՆ դոլար, ինչպես և նախորդ տարի: SS ոլորտում աշխատող 9567 տեխնիկական մասնագետների 48%-ն աշխատում է հեռահաղորդակցության ոլորտում, մինչդեռ մնացած տեխնիկական աշխատուժն աշխատում է ծրագրային ապահովման և ծառայությունների ոլորտում:

Ինչպես երևում է ստերև բերված գծապատկերից, 2013թ.-ի համեմատ 2014թ.-ին ղեկավար և բիզնես մասնագետների մասնաբաժինն ընդհանուր SS աշխատուժի մեջ աճել է և՛ տեղական, և՛ արտասահմանյան բաժնեմասնակցությամբ ընկերություններում: Ակնհայտ է, որ օտարերկրյա ընկերություն-

Ունենալով ամենաբարձր մեծ ծավալներ են արձանագրվել, քան տեղական ընկերություններում, ինչը ցույց է տալիս, որ օտարերկրյա ընկերությունները մեծացնում են Հայաստանում իրենց ներկայության մասշտաբները:

Նկար 4. Աշխատուժի բաշխվածությունը



2013թ.-ի տվյալներով Հայաստանի ՏՏ ոլորտում աշխատողների 63%-ը մագիստրոսի կամ ավելի բարձր աստիճան ունի; Ուսանողների կազմում են ՏՏ աշխատուժի 36%-ը: Չնայած տեղական ընկերությունների կողմից կարգավորված վերապատրաստումը համարվում է իրենց զարգացման կարևորագույն բաղադրիչ՝ նրանցից քչերն են ի վիճակի ապահովել աշխատակիցների շարունակական վերապատրաստման գործընթացը: Այս հարցում մեծ մեծ դեր է խաղում անհրաժեշտ միջոցների ու համապատասխան անձնակազմի առկայությունը: Շատ ընկերություններում ԲՈՒՀ-երի նոր շրջանավարտներն անցնում են չվարձատրվող աշխատանքային պրակտիկա: Ընդունված է, որ պրակտիկա անցնողները նախ վերապատրաստվում են, ընդգրկվում են ընկերության ոչ աշխատանքային գործունեության մեջ, այնուհետև նրանցից լավագույններն ընտրվում են մշտական աշխատանքի: Նորեկ աշխատողները սովորաբար աշխատանքի են անցնում միայն երկուսից ավելի ամիս անց: Հայկական ՏՏ ոլորտում աշխատակիցների մեծամասնությունը արական սեռի ներկայացուցիչներ են (66%): Ծրագրային ապահովման և ծառայությունների ոլորտի կին աշխատողների քանակը 2013թ.-ի համեմատ ավելացել է 3%-ով: Տեղական և օտարերկրյա ընկերություններում աշխատում է ամբողջ աշխատուժի համապատասխանաբար 44% և 56%-ը (2008թ.-ին այս հարաբերակցությունը եղել է 50/50), ինչը նշանակում է, որ տեղական ընկերու-

թյուններում զբաղված աշխատողների թիվը նախորդ տարվա համեմատ աճել է 1%-ով: Օտարերկրյա բաժնեմասնակցությամբ ընկերությունների աշխատակիցների միջին թիվը (թվաբանական միջին) 55 աշխատակից է, իսկ տեղական ընկերությունների աշխատակիցների միջին թիվը՝ 18: Տեղական ընկերություններում կրտսեր տեխնիկական աշխատողի միջին աշխատավարձը տատանվում է 250-300 ԱՄՆ դոլարի սահմաններում, իսկ ավագ մասնագետների աշխատավարձը հասնում է 3000 ԱՄՆ դոլարի: Օտարերկրյա բաժնեմասնակցությամբ ընկերություններում տեխնիկական մասնագետի աշխատավարձը կազմում է 400-ից 3500 ԱՄՆ դոլար: Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, տեխնիկական աշխատողների աշխատավարձը պայմանավորվում է ոչ թե կրթությամբ, այլ աշխատանքային փորձով:

Ծրագրավորման օՖշորային գործունեության համար Հայաստանը դեռ համարվում է ցածր ծախսեր պահանջող երկիր, որտեղ վարձատրություններն իրենց չափով չեն զիջում ՏՏ ոլորտի աշխատանքների պատվիրման հիմնական երկրներին, ինչպիսիք են, օրինակ, Հնդկաստանը, Ռուսաստանը, Իսրայելը, Իռլանդիան և Չինաստանը: Ընկերությունների բաշխումն ըստ նրանց աշխատակիցների թվի 2014թ.-ի համար էականորեն չի տարբերվում նախորդ տարվա ցուցանիշներից: Ինչպես և 2013թ.-ին, ոլորտի ընկերություններում զբաղված մասնագետների թիվը զգալիորեն տատանվում է: Ընկերությունների ընդամենը 5%-ում են աշխատում 100 և ավելի մասնագետներ, ինչը կազմում է ամբողջ աշխատուժի 47%-ը, իսկ 78%-ում՝ 25-ից պակաս մասնագետներ, ինչը կազմում է ամբողջ աշխատուժի 30%-ը: Հայաստանում ՏՏ ընկերությունների շարքում՝ ըստ աշխատուժի, գերակշռում են փոքր ձեռնարկությունները, ինչը ոլորտի արտադրողականության վրա բացասաբար ազդող գործոններից մեկն է: Օտարերկրյա մասնաճյուղերի ռազմավարության շրջանակներում նախատեսվում է աշխատակիցների մշտական վերապատրաստում ինչպես Հայաստանում, այնպես էլ զլխամասային ընկերություններում: Ավելին, մասնաճյուղերում հիմնադրվել են ռեսուրսների հատուկ կենտրոններ և գրադարաններ, արտեղ կատարելագործվում և վերապատրաստվում են աշխատակիցները: Արտասահմանյան մի շարք ընկերությունների աշխատակիցներ հնարավորություն ունեն դառնալու գործատու ընկերության բաժնետեր և աշխատավարձից բացի ստանալու այլ տեսակի խրախուսումներ: Վերջիններք տարիների ընթացքում նման նախաձեռնություններ հանդիպում են նաև տեղական ընկերություններում:

Ամփոփելով արդյունքները կարելի է նշել, որ ՏՏ ոլորտը հսկայական արտահանման ներուժ ունի և որպես այդպիսին կարող է մեծ ներդրում ունենալ հայաստանի տնտեսության աճի ու զարգացման գործում: Այսօր հայաստանյան ՏՏ ընկերությունները կարող են առաջարկել միջազգային

բարձր ստանդարտներին համապատասխանող արտադրանք ու ծառայություններ: Սակայն դեռևս կան որոշակի խնդիրներ արտաքին շուկաներ դուրս գալու և ՏՏ ոլորտի համար մասնագետներ պատրաստելու հարցում: Այս տեսանկյունից կարևոր է կառավարության կողմից խրախուսման քաղաքականության և շարունակական աջակցման ծրագրերի իրականացումը:

Սերգեյ ԷԼԱՐՅԱՆ

ՀՀ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ձեռնարկությունների գործունեության համառոտ վերլուծություն

Բանալի բառեր. ՏՏ ոլորտ, որակավորված մասնագետներ, ՏՏ ներդրումներ

Հոդվածում ներկայացված են ՀՀ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ձեռնարկությունների գործունեության ամփոփ ցուցանիշները, դրանց փոփոխման միտումները և աճի տեմպերը, ինչպես նաև ոլորտում աշխատուժի բաշխվածությունը և ընկերությունների մասնագիտացման ուղղությունները: Վերլուծության արդյունքում առաջ եկած տվյալների հիման վրա արվել են համապատասխան եզրահանգումներ:

Сергей ЭЛАРЯН

Краткий анализ деятельности предприятий в сфере информационных технологий РА

Ключевые слова: ИТ сфера, иностранные и местные компании, квалифицированные специалисты, ИТ инвестиции

В статье представлены перечень показателей деятельности компаний информационных технологий в Республике Армения, меняющиеся тенденции и темпы роста, а также распределения сотрудников и специализации компаний. Анализирован поучительный международный опыт в области информационных технологий. На основании проведенного анализа сделаны соответствующих выводы.

Sergey ELARYAN

International experience of IT companies by attracting foreign direct investments

Key words: IT sphere, foreign and local companies, qualified specialists, IT investments

The article presents a list of indicators of activity in the IT industry in the Republic of Armenia, the changing trends and growth rates, as well as labor distribution and the areas of specialization of the companies. In addition international experience in mentioned field is analysed with a special emphasize to localize it for internal market. Based on the analysis of the relevant conclusions are made.